




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«18» հոկտեմբեր 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետ  Մ. Անանյան

ՍՑ-ԳԲԽ-35/16 բողոքը քննող
հանձնաժողովին

Ե Ջ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 15.04.2016թ. թիվ 1/73-1/12154-16 գրությամբ ներկայացված Ա/Ձ Կարեն Ավանեսյանին (ՀՎՀՀ՝ 35031716) և «ՇԱԿՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 03310923) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ նաև՝ Նախարարություն), ՀՀ ԿԱ ուստիկանության 11.03.2016թ. թիվ 11/467 և 18.03.2016թ. թիվ 11/537

գրությունների հիման վրա, 22.03.2016թ. թիվ 1/73-3/10322-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել Ա/Ձ Կարեն Ավանեսյանին և «ՇԱԿՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերը նշված մասնակցին Ցուցակում ներառելու համար:

ՀՀ ֆինանսների նախարարությունը վերը նշված գրությամբ Կենտրոնին է ներկայացրել ՀՀ ԿԱ ոստիկանության 11.03.2016թ. թիվ 11/467 և 18.03.2016թ. թիվ 11/537 գրությունների պատճենները:

Կենտրոնը 12.04.2016թ. թիվ 01/04.1/1447-16 և 12.04.2016թ. թիվ 01/04.1/1446-16 գրություններով ՀՀ ֆինանսների նախարարության 22.03.2016թ. թիվ 1/73-3/10322-16 գրության հիման վրա «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում ներկայացրել է եզրակացություն, որով Կենտրոնը արձանագրել է Ա/Ձ Կարեն Ավանեսյանի և «ՇԱԿՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը:

Միաժամանակ Կենտրոնը հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և մասնակցին վերագրվող խախտում թույլ տալու պահից **մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ**, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտել է, որ կողմից խախտումը թույլ տալու պահից (Ա/Ձ Կարեն Ավանեսյան 28.02.2016թ. և «ՇԱԿՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ 18.02.2016թ.) հաշված մեկ տարվա ընթացքում մասնակիցների կողմից հայտ ներկայացնելը հիմք կհանդիսանա ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում

պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար, որի արդյունքում Ա/Ձ Կարեն Ավանեսյանը և «ՇԱԿՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն կարող են ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Սակայն, ՀՀ ֆինանսների նախարարությունը 15.04.2016թ. թիվ 1/73-1/12154-16 գրությամբ հանձնարարել է Կենտրոնին նախաձեռնել Ա/Ձ Կարեն Ավանեսյանին և «ՇԱԿՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. Ա/Ձ Կարեն Ավանեսյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

Ա/Ձ-ն 31.03.2016թ. գրությամբ հատնել է, որ մասնակցել է ՀՀ ԿԱ ոստիկանության կողմից կազմակերպված «ՀՀ ԿԱ Ո-ԲԸՀԾՁԲ-2016/ԱՎ-1» ծածկագրով բանակցային ընթացակարգին, որից հետո պարզվել է, որ Ա/Ձ-ն ունեցել է 40000 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություն, որը նույն օրը մարվել է:

Ա/Ձ-ն նշել է նաև, որ նշված պարտքը գոյացել է թյուրիմացաբար և հաշվի առնելով ուղևորափոխադրող ավտոմեքենաների վարձակալության ծառայությունների մատուցման բնագավառում ունեցած 10-ամյա փորձը, խնդրել է թույլ տրված վրիպումը համարել հարգելի:

2. «ՇԱԿՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

Ընկերությունը 31.03.2016թ. գրությամբ հատնել է, որ «ՇԱԿՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ում հարկային պարտավորությունների հետ կապված խնդիրը առաջացել է Ընկերության գործընկերների կողմից իրենց պարտավորությունները ժամանակին և ոչ պատշաճ կատարելու արդյունքում: Ընկերությունը նշել է նաև, որ պետության հանդեպ առաջացած հարկային պարտավորությունները ամբողջությամբ կատարվել են:

«ՇԱԿՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն խնդրել է Ընկերությանը չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում:

3. ՀՀ ԿԱ ոստիկանության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ ԿԱ ոստիկանության 11.03.2016թ. թիվ 11/467 և 18.03.2016թ. թիվ 11/537 գրություններով ներկայացրել է «ՀՀ ԿԱ Ռ-ԲԸՀԾՁԲ-2016/ԱՎ-1» և «ՀՀ ԿԱ Ռ-ՊԸԾՁԲ-2016/ԿՇԲ/ԷՍՎ/1» ծածկագրերով ընթացակարգերին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

4. ՍՑ-ԳԲԽ-35/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

1. ՀՀ ֆինանսների նախարարության 15.04.2016թ. թիվ 1/73-1/12154-16 գրությամբ ներկայացված Ա/Ձ Կարեն Ավանեսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

- Ա/Ձ Կարեն Ավանեսյանը (այսուհետ նաև՝ Ա/Ձ) ՀՀ ԿԱ ոստիկանության կողմից կազմակերպված «ՀՀ ԿԱ Ռ-ԲԸՀԾՁԲ-2016/ԱՎ-1» ծածկագրով բանակցային ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցելու նպատակով 28.02.2016թ. ներկայացրած հայտի N 2 հավելվածով՝ Ա/Ձ-ն մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

- Պատվիրատուն, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին կատարած հարցմամբ խնդրել է Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն Ա/Ձ Կարեն Ավանեսյանի կողմից 2016թ. փետրվարի 28-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Հայաստանի

Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու վերաբերյալ:

- ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացության՝ Ա/Ձ-ն Ընթացակարգին մասնակցության հայտը ներկայացնելու (28.02.2016թ.) օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն 40,979 ՀՀ դրամի չափով:

- ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԿԱ ոստիկանության 11.03.2016թ. թիվ 11/467 և 18.03.2016թ. թիվ 11/537 գրությունների հիման վրա, 22.03.2016թ. թիվ 1/73-3/10322-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ խնդրելով ուսումնասիրել Ա/Ձ Կարեն Ավանեսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ա/Ձ-ին Ցուցակում ներառելու համար:

Վերը նշված գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը ներկայացրել է Շենգավիթի հարկային տեսչության գրությունը, որի համաձայն՝ Ա/Ձ Կարեն Ավանեսյանը 28.02.2016թ. դրությամբ ունեցել է 46,024 ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 1,919 ՀՀ դրամը հաստատագրված վճարի գծով, իսկ 44,105 ՀՀ դրամը՝ եկամտային հարկի գծով:

- Կենտրոնը 12.04.2016թ. թիվ 01/04.1/1447-16 գրությամբ արձանագրել է Ա/Ձ Կարեն Ավանեսյանի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը և տեղեկացրել է Նախարարությանը, որ գործում առկա չէ որևէ տեղեկատվություն Ա/Ձ-ի կողմից խախտումը թույլ տալու օրվանից՝ 28.02.2016թ.-ից, հաշված մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու վերաբերյալ, ուստի Կենտրոնը գտել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 22.03.2016թ. թիվ 1/73-3/10322-16 գրությամբ Ա/Ձ Կարեն Ավանեսյանին (ՀՎՀՀ՝ 35031716) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Միաժամանակ Կենտրոնը տեղեկացրել է, որ խախտումը թույլ տալու պահից (28.02.2016թ.) հաշված մեկ տարվա ընթացքում Ա/Ձ-ի կողմից հայտ ներկայացնելը հիմք կհանդիսանա ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական

ընթացակարգ նախաձեռնելու համար, որի արդյունքում Ա/Ձ Կարեն Ավանեսյանը կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

- Ի պատասխան Կենտրոնի 12.04.2016թ. թիվ 01/04.1/1447-16 գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, Կարգի 124-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, 15.04.2016թ. թիվ 1/73-1/12154-16 գրությամբ հանձնարարել է նախաձեռնել Ա/Ձ Կարեն Ավանեսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. ՀՀ ֆինանսների նախարարության 15.04.2016թ. թիվ 1/73-1/12154-16 գրությամբ ներկայացված «ՇԱԿՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

- «ՇԱԿՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ ԿԱ ոստիկանության կողմից կազմակերպված «ՀՀ ԿԱ Ո-ՊԸԾՁԲ-2016/ԿՇԲ/ԷՍՎ/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցելու նպատակով 18.02.2016թ. ներկայացրած հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

- Պատվիրատուն, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին կատարած հարցմամբ խնդրել է Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «ՇԱԿՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից 2016թ. փետրվարի 18-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու վերաբերյալ:

- ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացության՝ Ընկերությունը Ընթացակարգին մասնակցության հայտը ներկայացնելու

(18.02.2016թ.) օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն 5,602,804 ՀՀ դրամի չափով:

- ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԿԱ ոստիկանության 11.03.2016թ. թիվ 11/467 և 18.03.2016թ. թիվ 11/537 գրությունների հիման վրա, 22.03.2016թ. թիվ 1/73-3/10322-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ խնդրելով ուսումնասիրել «ՇԱԿՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ա/Ձ-ին Ցուցակում ներառելու համար:

- Կենտրոնը 12.04.2016թ. թիվ 01/04.1/1466-16 գրությամբ արձանագրել է Ընկերության կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը և տեղեկացրել է Նախարարությանը, որ գործում առկա չէ որևէ տեղեկատվություն Ընկերության կողմից խախտումը թույլ տալու օրվանից՝ 18.02.2016թ.-ից, հաշված մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու վերաբերյալ, ուստի Կենտրոնը գտել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 22.03.2016թ. թիվ 1/73-3/10322-16 գրությամբ «ՇԱԿՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 03310923) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Միաժամանակ Կենտրոնը տեղեկացրել է, որ խախտումը թույլ տալու պահից (18.02.2016թ.) հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից հայտ ներկայացնելը հիմք կհանդիսանա ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար, որի արդյունքում «ՇԱԿՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

- Ի պատասխան Կենտրոնի 12.04.2016թ. թիվ 01/04.1/1466-16 գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, Կարգի 124-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, 15.04.2016թ. թիվ 1/73-1/12154-16 գրությամբ հանձնարարել է նախաձեռնել «ՇԱԿՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

5. ՍՑ-ԳԲԽ-35/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

Կենտրոնը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 15.04.2016թ. թիվ 1/73-1/12154-16 գրությունը, ՀՀ ԿԱ ոստիկանության 11.03.2016թ. թիվ 11/467 և 18.03.2016թ. թիվ 11/537 գրությունները և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ **գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:**

Նույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում **ներկայացրել է կեղծ տվյալ:**

1. Ա/Ձ Կարեն Ավանեսյանը ՀՀ ԿԱ ոստիկանության կողմից կազմակերպված «ՀՀ ԿԱ Ո-ԲԸՀԾՁԲ-2016/ԱՎ-1» ծածկագրով բանակցային ընթացակարգին մասնակցելու նպատակով 28.02.2016թ. ներկայացրած հայտի N 2 հավելվածով՝ Ա/Ձ-ն մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացության՝ Ա/Ձ-ն Ընթացակարգին մասնակցության հայտը ներկայացնելու (28.02.2016թ.) օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն 40,979 ՀՀ դրամի չափով:

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԿԱ ոստիկանության 11.03.2016թ. թիվ 11/467 և 18.03.2016թ. թիվ 11/537 գրությունների հիման վրա, 22.03.2016թ. թիվ 1/73-

3/10322-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ խնդրելով ուսումնասիրել Ա/Ձ Կարեն Ավանեսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ա/Ձ-ին Ցուցակում ներառելու համար:

Վերը նշված գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը ներկայացրել է Շենգավիթի հարկային տեսչության գրությունը, որի համաձայն՝ Ա/Ձ Կարեն Ավանեսյանը 28.02.2016թ. դրությամբ ունեցել է 46,024 ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 1,919 ՀՀ դրամը հաստատագրված վճարի գծով, իսկ 44,105 ՀՀ դրամը՝ եկամտային հարկի գծով:

Ելնելով վերոգրյալից՝ Կենտրոնը գտնում է, որ Ա/Ձ Կարեն Ավանեսյանի կողմից 28.02.2016թ. հայտի N 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե **հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:**

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն են՝**

- նույն կետի «բ» ենթակետերով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,

• *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

Այսպիսով, Կենտրոնը արձանագրում է, որ Ա/Ձ Կարեն Ավանեսյանի վերաբերյալ դեռևս առկա է Ցուցակում ներառելու միայն մեկ հիմքը, այն է՝ **Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված և վերջինիս վերագրվող խախտման առկայությունը**, սակայն Ա/Ձ-ն Ցուցակում ներառելու մասին որոշումը կարող է կայացվել միայն երկրորդ պարտադիր հիմքի՝ **խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից հայտ ներկայացնելու հանգամանքի** ի հայտ գալու պայմաններում: Մինչդեռ մինչև վերոհիշյալ եզրակացությունը ՍՑ-ԳԲԽ-35/16 բողոքը քննող հանձնաժողովին տրամադրելը՝ Կենտրոնը չունի որևէ տեղեկատվություն Ա/Ձ-ի վերագրվող խախտում թույլ տալու պահից (28.02.2016թ.) մեկ տարվա ընթացքում գնման որևէ գործընթացին հայտ ներկայացրած լինելու վերաբերյալ, ինչը հանդիսանում է մասնակցին Ցուցակում ներառելու մասին որոշում կայացնելու համար երկրորդ պարտադիր պայմանը, ուստի առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 15.04.2016թ. թիվ 1/73-1/12154-16 գրությամբ ներկայացված Ա/Ձ Կարեն Ավանեսյանին (<ՎՀՀ՝ 35031716) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

2. «ՇԱԿՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն ՀՀ ԿԱ ոստիկանության կողմից կազմակերպված «ՀՀ ԿԱ Ո-ՊԸԾՁԲ-2016/ԿՇԲ/ԷՍՎ/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգին մասնակցելու նպատակով 18.02.2016թ. ներկայացրած հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացության՝ Ընկերությունը Ընթացակարգին մասնակցության հայտը ներկայացնելու (18.02.2016թ.) օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն 5,602,804 ՀՀ դրամի չափով:

Ելնելով վերոգրյալից՝ Կենտրոնը գտնում է, որ «ՇԱԿՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից 18.02.2016թ. հայտի N 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե **հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:**

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն են՝**

- նույն կետի «բ» ենթակետերով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,
- խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:

Այսպիսով, Կենտրոնը արձանագրում է, որ «ՇԱԿՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի վերաբերյալ դեռևս առկա է Ցուցակում ներառելու միայն մեկ հիմքը, այն է՝ **Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված և վերջինիս վերագրվող խախտման առկայությունը**, սակայն Ընկերությունը Ցուցակում ներառելու մասին որոշումը կարող է կայացվել միայն երկրորդ պարտադիր հիմքի՝ **խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից հայտ ներկայացնելու հանգամանքի** ի հայտ գալու պայմաններում: Մինչդեռ մինչև վերոհիշյալ եզրակացությունը ՍՑ-ԳԲԽ-35/16 բողոքը քննող հանձնաժողովին տրամադրելը՝ Կենտրոնը չունի որևէ տեղեկատվություն Ընկերությանը վերագրվող

խախտում թույլ տալու պահից (18.02.2016թ.) մեկ տարվա ընթացքում գնման որևէ գործընթացին հայտ ներկայացրած լինելու վերաբերյալ, ինչը հանդիսանում է մասնակցին Ցուցակում ներառելու մասին որոշում կայացնելու համար երկրորդ պարտադիր պայմանը:

Ելնելով վերոգրյալից՝ Կենտրոնը առաջարկում է ՀՀ ֆինանսների նախարարության 15.04.2016թ. թիվ 1/73-1/12154-16 գրությամբ ներկայացված «ՇԱԿՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 03310923) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:


«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝




Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝



Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի գլխավոր
մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-35/16 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝



Լ. Հովակիմյան